


# ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Աստված ներշնչել է ողջ Սուրբ Գիրքը: Ճիշտ ինչպես մենք չենք կարող ապրել շնչելով միայն շաբաթ և կիրակի օրերը, այնպես էլ չենք կարող հոգևորապես ապրել Խոսքն ընդունելով միայն շաբաթ և կիրակի օրերը: Մենք պետք է խորը շնչենք և ներս շնչենք Աստծո Խոսքն ամեն օր:

> Վաթսունվեց գիրք: Հազար հարյուր ութսունինը գլուխ: Գրված լինելով 40 անձանց միջոցով 1500 տարվա ընթացքում՝ Աստվածաշունչը շատ ավելին է, քան ընդամենը մի մեծ և հին գիրք.

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեր նախքին երկու պադգամների մեջ նշեցինք որ Աստծո Խոսքը մեր ամենօրյա հացն է և սնում է մեզ, նաև Աստծո Խոսքն ամեն օր մեզ համար կյանքի աղբյուր է: Այսօր կխոսենք որ Աստծո Խոսքը մեր շունչն ու կյանքն է: ՀԱՑ, ՋՈՒՐ, ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ:

***Քանՙի օր կարող եք ապրել առանց հացի – 40ից-80ն օր:***
***Քանՙի օր առանց ջրի – 4ից-14ս օր:***
***Քանՙի օր առանց Շնչառության – միայն վարկյաններ,,***

> ***Ըստ էության, միջին չափահասը շնչում է օրական մոտ 23000 մեկ օրում:***

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ – theopneustos ՏԻԱ ՆՈՒՍՏԱՍ – ԱՍՏՎԱԾ ՇՈՒՆՉ, ԱՍՏՎԱԾ ՇՆՉԵՑ:

**theopneustos – Տիա Նուստաս**
**theo - Theos = God - Աստված**
**pneustos - Pneuma = Breath – շունչ**

***2 Տիմ. 3:16-17 -*** *16 Աստծու շնչով գրուած <u>ամէն</u> գիրք <u>օգտակար է</u> (1)ուսուցման, (2)հանդիմանութեան, (3)ուղղելու և (4)արդարութեան մէջ (5)խրատելու համար. 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար:*

- *Աՙրդյոք մարդը կարող է խոսել առանց շնչելու: Կամ շարջվել առանց շնչի:*

  ***2 Պետ. 1:20-21 -*** *20 <u>Բայց առաջ այս իմացէ՛ք</u>, որ Գրքերի ամեն մարգարէութիւն իր հատուկ մեկնութիւնը չ'ունի: 21 Որովհետև երբէք մի մարգարէութիւն չ'տրվեց մարդկանց կամքի պէս, բայց Սուրբ Հոգուց շարժուած խօսեցին Աստուծո մարդիկ:*

- *ՍՈՒՐԲ ՅՈԳԻՆ ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉՆ Է*

***Շատ հետաքրքիր է իմանալ եբրայերեն ոգի (spirit) բառի բացատրությունը: Եբրայերենով ոգի (spirit) բառը ՌՈՒէԽ ruach է, և դա նշանակում է, «օդը շարժման մեջ / օդային շարժում»: Դա նույն "շունչ (breath)" բառն է, և դա նաև նշանակում է "կյանք (life)": Ըստ նմանությամբ  շնչել (to breath) և օդը շարժման մեջ (air in motion),  կապակցություննների միասնությունը նշանակում է "ոգի (spirit)":  Greek word in the NT is Նյումա pneuma.***

***2 Պետ. 3:15-16 -*** *15  Եւ Տիրոջ համբերատարութիւնը փրկութիւն համարեցէք, ինչպէս որ մեր սիրելի*
*եղբայր Պօղոսն էլ գրեց ձեզ, ըստ Աստծուց իրեն շնորհուած իմաստութեան:  16  և ինչպէս որ իր բոլոր*
*թղթերում էլ խօսում է դրանց մասին. դրանց մէջ կան ինչ-ինչ դժվարիմաց բաներ. Որ անուսումները և*
*անհաստատները ծուռ են մեկնում, նրանք այդպէս են մեկնում նաև <u>բոլոր Գրուածքները՝</u> իրենց անձերի*
*կորստյան համար:*

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵԶ. 37:1-10, ՍԱՂ. 105:40-41

***Եզ. 37:1-10 -*** *1  Տիրոջ ձեռքը ինձ վրա եղավ, և Տէրը ինձ դուրս հանեց հոգով, և ինձ դուրս հանեց դաշտի*
*մէջ, և դա լիքն էր ոսկորներով:  2  Եւ ինձ պտտեցրեց ոսկորների շուրջը, և ահա նրանք շա՜տ-շատ էին*
*դաշտի երեսին ու սաստիկ չորացած էին:*

*3  Եւ ինձ ասեց. Մարդու որդի, մի՞թէ կկենդանանան այս ոսկորները. Եւ ես ասեցի. Ով Տէր Եհովա,  դու*
*գիտես:  4  Եւ նա ինձ ասեց. Մարգարէացիր այս ոսկորների վրա և ասա նորանց. Ով չորացած ոսկորներ,*
*<u>լսեցէք Տիրոջ խօսքը</u>.  5  <u>Այսպէս է ասում Տէր Եհովան այս ոսկորներին</u>. Ահա ես  ձեր մէջը հոգի պիտի դնեմ,*
*և դուք պիտի կենդանանաք:  6  Եւ ձեզ վրա ջիղեր պիտի դնեմ, և ձեզ վրա միս պիտի բերեմ և ձեզ պիտի*
*մաշկով պատեմ, և ձեր մէջը  շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք. Եւ պիտի իմանաք որ ես եմ*
*Տէրը:*

*7  Եւ ես մարգարէացա ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը. Ու երբ մարգարէացա, մի ձայն լսեցի, հետո*
*շարժում եղավ, և ոսկորները մօտեցան՝ ոսկոր ոսկորի մօտ:  8  Եւ տեսա, որ ջղերն ու մսերը պատում էին*
*ոսկորները, և մաշկը պատեց նորանց վերևից, սակայն <u>շունչ չկար նորանց մէջ</u>:  9  Նա ասաց ինձ.*
*«Մարգարէացի՛ր, մարդո՛ւ որդի, մարգարէացի՛ր շնչի վրա և ասա՛ շնչին. «Այսպէս է ասում Տէր Աստուած.*
*Ե՛կ, ո՛վ շունչ, չորս հողմերից, ու փչի՛ր մեռելների վրա, և նրանք կը կենդանանան՝  10  Ես մարգարէացա,*
*ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը: Ու շունչ մտավ նրանց մէջ, և կենդանացան: Ելան կանգնեցին իրենց*
*ոտքերի վրա, և մի խիստ շատ մեծ բանակ էր:*

## 1. ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:

*3  Եւ ինձ ասեց. Մարդու որդի, մի՞թէ կկենդանանան այս ոսկորները. Եւ ես ասեցի. <u>Ով Տէր Եհովա, դու գիտես</u>:*

- ***Մենք չենք կարող Աստվածաշնչի վերաբերյալ դատողություններ անել ըստ մեր հասկացածի: Մենք պետք է հավատով ընդունենք և Աստծուն փնտրենք Նրա Խոսքի միջոցով, և Նա մեզ կտա հասկացողություն:***
    - *Մատ. 27:5 -  Եւ նա արծաթը գցեց տաճարի մէջ՝ հեռացավ, եւ գնաց ինքնիրեն խեղդեց:*
        - *Գործ. 1:18 -  Արդ սա  անիրավության վարձքով մի  ագարակ ստացավ. եւ գլխի վայր ընկնելով միջից ճղվեց, եւ նորա բոլոր փորը դուրս թափվեց:*
    - *Հակ. 2:24 -  Արդ տեսնո՞ւմ էք որ մարդ գործերով է արդարանում, եւ ոչ միայն հավատքով:*
        - *Հռ. 3:28 - 28  Ուրեմն համարում ենք,  որ մարդը հավատքով է արդարանում առանց օրէնքի գործերի:*

- ***Երբե մենք հավատում ենք Աստծո Խոսքին, մեր կյանքը փոխվում է:***
- ***Ո՞Վ Է ՏԱԼԻՍ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ և ԻՆՉՊԵ՞Ս:***

*Հոբ **32:8 -** Բայց մարդիկ հոգի ունեն, և Ամենակարողի շունչն է նորանց հանճար տալիս:*

- ***Երբ մենք հավատում ենք Աստծո Խոսքին, մեր կյանքը փոխվում է: Եվ մենք ստանում ենք հոգու հայտնությունը, այսինքն հոգևոր հասկացողություն:***

*Ղուկ. **24:44-46 -** 44 Եւ ասեց նորանց. Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ խօսեցի, քանի որ ես ձեզ հետ էի, թէ պէտք է կատարվի Մովսէսի օրենքում և մարգարէներում և սաղմոսներում բոլոր ինձ համար գրուածները: 45 Այն ժամանակ նորանց միտքը բացվեց, որ գրքերը հասկանան: 46 Եւ նորանց ասեց թէ Այսպէս է գրված, և այսպէս պէտք էր Քրիստոսին չարչարվել և երրորդ օրը մեռելների միջից հարութիւն առնել.*

**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:**

2. **ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ Է ԲԵՐՈՒՄ:**

*7 Եւ ես մարգարէացա ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը. Ու երբ մարգարէացա, մի ձայն լսեցի, հետո շարժում եղավ, և ոսկորները մօտեցան՝ ոսկոր ոսկորի մօտ:*

*Ձայն եղավ — և ահա մի շարժում...*

- *Աստված խոսեց, փչեց Իր շունչը և ստեղծեց բոլոր արարածներին:*

*Սաղ. **33:6 -** 6 Տիրոջ խօսքով երկինքն ստեղծվեց, և նորա բերանի հոգով նորա բոլոր զօրքերը:*

*Ծննդ. **1:2-3 -** 2 Եւ երկիրն անձև ու դատարկ էր. և խավար կար անդունդի վրա. և Աստուծո Հոգին շրջում էր ջրերի վրա: 3 Եւ Աստուած ասեց, Լույս լինի. և լույս եղավ:*

**Աստծո Հոգին – ամենուր է, ամեն տեղ և ամեն ժամանակ:**

- *ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈ ՇՆՉԻ ՄԵՋ Է:*

*Եսա. **55:11 -** 11 Այնպէս էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած խօսքը, նա պիտի պարապ ետ չդառնա ինձ մօտ, այլ կատարէ իմ ուզածը, և հաջողվի նրանում, ինչի համար որ ես նորան ուղարկեցի:*

**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:**
**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ Է ԲԵՐՈՒՄ:**

3. **ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:**

*6 Եւ ձեզ վրա ջիղեր պիտի դնեմ, և ձեզ վրա միս պիտի բերեմ և ձեզ պիտի մաշկով պատեմ, և ձեր մէջը շունչ պիտի դնեմ, և դուք պիտի կենդանանաք. Եւ պիտի իմանաք որ ես եմ Տէրը:*

*8 Եւ տեսա, որ ջղերն ու մսերը պատում էին ոսկորները, , և մաշկը պատեց նորանց վերևից, սակայն շունչ չկար նորանց մէջ:*

*Ինչպես է Աստծո շունչը զորություն բերում: Աստծո զորությունը գործում է, երբ մենք խոսում ենք Նրա Խոսքը:*

*Ծննդ. **8:1 -** Եւ Աստուած հիշեց Նոյին և բոլոր կենդանիներին և բոլոր անասուններին, որ նորա հետ տապանումն էին. և Աստուած երկրի վրա մի քամի բերավ, և ջրերը նվազուեցին:*

*Գործ.* ***1:8 -*** *8 Բայց դուք զօրութիւն կ'առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ'գայ, և իմ վկաները կ'լինիք Երուսաղէմումը և բոլոր Հրէաստանի և Սամարիայի մէջ մինչև երկրի ծայրերը:*

*Հով.* ***20:22 -*** *22 Եւ սա ասելով փչեց նրանց վրա և ասեց. Առէք Սուրբ Հոգին:*

**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:**
**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ Է ԲԵՐՈՒՄ:**
**ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ:**

## 4. ԱՍՏԾՈ ՇՈՒՆՉԸ ԿՅԱՆՔ Է ԲԵՐՈՒՄ:

*10 Ես մարգարէացա, ինչպէս որ հրամայել էր ինձ Տէրը: Ու շունչ մտավ նրանց մէջ, և կենդանացան: Ելան կանգնեցին իրենց ոտքերի վրա, և մի խիստ շատ մեծ բանակ էր:*

***Երբ մենք կարդում ենք Խոսքը, մենք շնչում ենք Աստծո կյանքը:***

*Ծննդ.* ***2:7 -*** *7 Եւ Եհովա Աստուած հողի փոշուց շինեց մարդուն. Եւ նորա ռնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, և մարդը կենդանի Հոգի եղավ:*

*Հոբ* ***33:4 -*** *4 Աստուծո Հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը՝ ինձ կեանք տվել:*

*Առակ.* ***4:20-22 -*** *20 Որդեակս, ուշադիր եղիր իմ խօսքերին, և ականջդ տուր իմ ասածներին. 21 Թող նորանք չգնան քո աչքի առջևից, պահիր նորանց քո սրտի մէջ: 22 Որ նորանք կեանք են նորանց գտնողներին, և նորանց բոլոր մարմնին՝ բժշկութիւն:*

- ***health - marpe Մարփէյ = medicine. health, healing, cure.***

## ԱՄՓՈՓՈՒՄ

- ***Աստծո շունչը բերում է հասկացողություն մեր կյանքում, կարգ ու կանոն, զորություն և կյանք:***